

Ինչպէս գրութեանս ընթացքին քանիցս յիշեցինք՝ անգամ մըն ալ կը կրկնենք թէ Երեմիա այս ժամանակաշրջանին, թէև տակաւին նորահաս երիտասարդ, իր լրջութեամբ ու խոհականութեամբ գործօն մասնակցութիւն կ'ունենայ ամէն այս խնդիրներուն մէջ՝ միշտ ներկայ գտնուելով ժողովներուն և նեցուկն ու խորհրդականը ըլլալով Եղիազարի ու ապա Մարտիրոս Ղրիմեցիի ու վայելելով անոնց լիակատար սէրն ու վստահութիւնը: Երեմիա եղած է նաև պաշտօնական քարտուղարը այդ շրջանի ազգային իշխանութեան մօտ ու ինք խմբագրած է կարևոր թուղթերը, որոնցմէ ոմանց յիշատակութիւնը կ'ընէ իր Օրագրութեան մէջ, զոր օրինակ.

1656 Ապրիլ 26ին⁽¹⁾ Մարտիրոս վրդ. Ղրիմեցի կը գառնայ Պրուսայէն ու հրաւիրագիրեր կ'ուղարկէ վեց եկեղեցիներուն, որպէսզի Ս. Նիկողայոսի եկեղեցին ժողովուին. կը գրէ նաև վանեցի Խօճա Ատոմին՝ որ վաճառականներ հետը առած ինք ալ ներկայ զբտնուի հոն՝ լսելու համար Աստուածատուր պատրիարքի պատուէրը: Այդ թուղթերէն հինգ հատը Երեմիա կը գրէ, ինչպէս կ'ըսէ. «Եւ զՍ թուղթն չնչինս գրեաց»:
Դարձեալ նոյն տարուան Մայիս 14ին Մարտիրոս վրդ. Երեմիայի ձեռքով թուղթ մը կը գրէ Թէքիրտաղցիներուն, յանդիմանելով զանոնք որ հակառակ իր կանխագոյն պատուէրին՝ ընդունեք են Մուղնեցին ու պատիւ ընծայեք են անոր: 1657 Փետր. 18ին և 19ին Եղիազարի թուղթերուն կը պատասխանէ յերուսաղէմ: Փետր. 23ին Պրուսացւոց թուղթերուն կը պա-

(1) Այս և ուրիշ տեղեր երբեմն աւելորդ համարեցանք Օրագրութեան էջերը նշանակել՝ նկատելով թէ կարելի է դիւրաւ գտնել զանոնք՝ հետևելով տարեթիւերուն ու ամսաթիւերուն: